

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԱՃԵՆ ՈՒ ԶԱՐԳԱՆԱՆ ՄԻԱՄԻՆ»

Գիտության պետական կոմիտեն և Գիտությունների ազգային ակադեմիան մշակել են գիտության ոլորտի զարգացման ռազմավարության նախագիծը: Փաստաթուղթն ամրագրում է գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը 2011-2020 թվականների համար: Այն գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջություն է, որը հիմք է հանդիսանալու ոլորտի զարգացման 2011-2015 և 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրերը մշակելու համար, որոնք իրենց հերթին ապահովելու են գիտության դինամիկ և նպատակաուղղված զարգացումը: Այդ ծրագրերն իրականացվելու են կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի զուգակցմամբ: Գիտության պետական կոմիտեի նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ զրույցը վերաբերում է ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը:

**-Պարոն Հարությունյան, ի՞նչ է իրենից ներկայացնում գիտության զարգացման ռազմավարությունը:**  
-Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում վերախմբավորվում և վերաձևակերպվում է պետության ու հասարակության վերաբերմունքը մարդկային գործունեության տարբեր ոլորտների և դրանց զարգացման առաջնահերթությունների նկատմամբ: Բայց անփոփոխ է մնում տնտեսապես զարգացած երկրների քաղաքականությունը գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտում, այն է՝ տնտեսական ճգնաժամը չպետք է ազդի ոլորտի ֆինանսավորման ծավալների վրա: Այլ խոսքով ասած, շարունակվում է այն քաղաքականությունը, որ ժամանակակից հասարակության զարգացման հիմքը գիտելիքն է, և միայն գիտելիքի վրա հիմնված տնտեսությունն ու հասարակությունն են ի գործու նվազագույն կորուստներով հաղթահարելու ինչպես արդի ֆինանսական դժվարությունները, այնպես էլ, ընդհանրապես, մարդկության առջև արդեն իսկ ծառայած կամ ապաստելիք մարտահրավերները:

Գիտությունն ու տնտեսությունը պետք է աճեն ու զարգանան միասին՝ մեկը մյուսից «սնվելով»: Պետության օժանդակության պայմաններում տնտեսավարող սուբյեկտները պետք է «սովորեն» էժան տնտեսական աճի համար օգտագործել հայրենի գիտության ձեռքբերումները, իսկ պետությունն էլ իր հերթին միջոցներ և հնարավորություններ կունենա տնտեսության կողմից դեռևս ցածր պահանջարկ ունեցող գիտական ուղղությունները խթանելու համար: Հասարակության և տնտեսության զարգացման այդպիսի մոդելի համատեքստում էլ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և Գիտությունների ազգային ակադեմիան մշակել են ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունն առաջիկա 10 տարիների համար :

**-Որո՞նք են այդ ռազմավարության առանձնահատկությունները:**  
-Ռազմավարության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ, նախ, գիտության ոլորտի զարգացումը փոխկապակցվել է առաջատար տեխնոլոգիաների դինամիկ զարգացման հետ (հակառակ դեպքում գիտության ոլորտի զարգացումը կդառնար ինքնանպատակ և միայն մշակութային արժեք ու հետևանք ունեցող երևույթ, որը նպատակաուղղված կլինի «աբստրակտ» գիտելիքի ձեռքբերմանը): Երկրորդ՝ գիտության ոլորտի զարգացումը ներկայացվում է որպես հաջորդական, աստիճանաբար բարդացող ու ավելի կարևորվող փուլերի ամբողջություն՝ նպատակ ունենալով վերջնական արդյունքում Հայաստանի համար ապահովել ուրույն տեղի ձեռքբերումը և հաստատումը միջազգային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում: Բացի այդ, առաջին անգամ փորձ է արվել մշակել այնպիսի ռազմավարություն, որ գիտության ոլորտի ֆինանսավորման ժամանակ առաջնահերթությունները տրվեն կոնկրետ ծրագրերի: Այսինքն՝ բացվում է մինչ այժմ գոյություն ունեցող այն փակ շրջանը, որ գիտությունը լավ չի ֆինանսավորվում, ինչի պատճառով արդյունքները միջազգային մակարդակից ցածր են և միջազգային չափանիշներին անհամապատասխան:

**-Ի՞նչ իրավիճակ է այսօր գիտության ոլորտում:**  
-Գիտության ոլորտի ներկայիս վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախության տարիներին որոշակիորեն պահպանվել են հանրապետության գիտական ներուժը, գիտական կազմակերպություններն ու դպրոցները, ձեռք են բերվել որոշակի նվաճումներ տարբեր բնագավառներում: Գիտական որոշ ուղղություններ արդեն իրենց ուրույն տեղն ունեն միջազգային գիտական և գիտակրթական տարածքում, ընդլայնվել է միջազգային համագործակցությունը: 2009 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ներգրավված են 116 կազմակերպություն, շուրջ 7 հազար 500 գիտնական և գիտական աշխատող, որոնցից 3075-ն ունեն գիտական աստիճան: Հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ իրականացվում են միջազգային բարձր

մակարդակին համապատասխանող մի շարք աշխատանքներ, որոնք հրատարակվում են հեղինակավոր գիտական ամսագրերում և արժանացել են բարձր գնահատականի ու մրցանակների ինչպես հանրապետությունում, այնպես էլ միջազգային ասպարեզում:

**-Այս ոլորտում բարեփոխումներն արդյոք ուշացած չե՞ն:**

-Գիտության ոլորտում հիմնարար բարեփոխումների ձգձգումը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների: Դրանք պայմանավորված են խորհրդային ժամանակների համեմատ ֆինանսավորման ծավալների կտրուկ կրճատմամբ, պետական առաջնահերթությունների բացակայությամբ, գիտական ներուժի զարգացման և վերարտադրության հնարավորության սահմանափակությամբ, գիտնականների արտահոսքով, ժամանակակից նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների անբավարար մակարդակով, ինչպես նաև գիտական արդյունքների ներդրման և առևտրայնացման համակարգի դանդաղ ձևավորմամբ: Արդյունքում շարունակվում է բարձրորակ կադրերի արտահոսքը գիտության բնագավառից, գիտական ավանդույթներ և միջազգային ճանաչում ունեցող մի շարք գիտական դպրոցներ կորցրել են իրենց երբեմնի բարձր դիրքերը, հասարակական գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը և գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի գրավչությունը, տնտեսական և հասարակական զարգացումներում նպատակների նախանշումը չի իրականացվում անհրաժեշտ գիտական վերլուծությունների, հիմնավորումների ու քննարկումների հիման վրա: Վերոնշյալ հիմնախնդիրները լուծելու, ինչպես նաև ունեցած ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար էլ մշակվել է գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ ձևակերպելով զարգացման հեռանկարը, նպատակային խնդիրները և դրանց հասնելու համար իրականացվելիք միջոցառումները:

**-Գիտության ոլորտում ի՞նչ վերջնական նպատակի ենք ուզում հասնել ռազմավարության ընդունմամբ:**

-Ռազմավարությունում ՀՀ գիտության ոլորտի զարգացման տեսլականը սահմանված է հետևյալ կերպ. 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունը գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտն առաջընթաց զարգացնող, գիտական հետազոտություններով և մշակումներով միջազգայնորեն ճանաչված, տնտեսական և սոցիալական առաջընթացում նոր գիտելիքի ստեղծման ու օգտագործման աստիճանով առաջատար երկրների շարքում գտնվող պետություն է: Ըստ այդ տեսլականի՝ ձևավորված են 7 թիրախային նպատակներ՝ առանձնացնելով և կարևորելով հայագիտության առաջընթաց զարգացման անհրաժեշտությունը որպես պետության համար կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող գերակայություն: Գիտության ոլորտի զարգացման թիրախային նպատակներն ընտրված են այնպիսի տրամաբանությամբ, որ որոշակի հաջորդական քայլեր իրականացնելու արդյունքում գիտական հետազոտությունների ու մշակումների արդյունքները պահանջարկ կունենան և համապատասխան կիրառություն կգտնեն հայրենական տնտեսության մեջ, կստեղծվի կրթության, գիտության տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ փոխգործակցող, ինքնավերարտադրվող համակարգ, և, վերջապես, հնարավոր կլինի միջազգային գիտական տարածքում գտնել այն նեղ մասնագիտացումը, որտեղ մեր հանրապետությունը կկարողանա դասվել առաջատար երկրների շարքին:

**-Գիտական կադրերի վերարտադրության ապահովման ուղղությամբ ի՞նչ ծրագրեր են նախատեսվում:**

-Գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացումը կդառնա ինքնանպատակ, եթե չապահովվի դրանց արդյունավետ և նպատակային շահագործումը բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի կողմից: Այս իմաստով բացառիկ ռազմավարական նշանակություն է ստանում բարձր կրթական մակարդակ ունեցող մասնագետների, գիտական ներուժի վերարտադրության հարցը: Բանն այն է, որ համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում սրվել է նաև պետությունների մրցակցությունը բարձր կրթական մակարդակ ունեցող մասնագետների ներգրավման ուղղությամբ: Այսպես, 2005 թ. Լիսաբոնում ձևավորված «Լիսաբոնյան ռազմավարության» նպատակադրումների (2010 թ. Եվրոպան պետք է ունենա ամենամրցունակ և դինամիկ զարգացող գիտելիքահենք տնտեսություն) իրականացման համար Եվրամիությունը նախատեսում է և՛ ավելացնել գիտական հետազոտություններին հատկացվող ֆինանսական ծավալները՝ մինչև ՀՆԱ-ի 3 տոկոս, և՛, միաժամանակ, ներգրավել լրացուցիչ 6-7 հարյուր հազար հետազոտողների: Իհարկե, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն այդ նպատակադրումների մեջ մտցնում է լրացուցիչ ճշգրտումներ, սակայն չի փոխում դրանց ներքին տրամաբանությունն ու ընդհանուր մտեցումները: Այս իմաստով մեզ համար սկզբունքային է դառնում բարձր որակավորում ունեցող մասնագետների խելամիտ և հավասարակշռված օգտագործումը, մասնավորապես դրանց չբալանսավորված արտահոսքից ներհոսքին անցնելու խնդիրը՝ պահպանելով գիտնականի և գիտելիք կրողի ազատ տեղաշարժի՝ միջազգայնորեն ընդունված իրավունքը: Նպատակին հասնելու նախապայմանը գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման եղանակների արդիականացումն է, մասնավորապես՝ մագիստրոսական և ասպիրանտական ուսուցումն ապագայում նաև ստեղծվելիք հետազոտական համալսարաններում իրականացնելը:

**-Գիտական և գիտատեխնիկական բնագավառի զարգացման համար անհրաժեշտ է նաև խթանել միջազգային**

**համագործակցությունը: Այդ առումով ի՞նչ է նախատեսվում:**

-Միջազգային համագործակցությունը մատչելի է դարձնում հետազոտությունների ավելի լայն շրջանակ, ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, նպաստում է հետազոտողների մոտ նոր գաղափարների և մտեցումների առաջացմանը, հնարավորություն է տալիս նրանց համեմատել իրենց աշխատանքը բնագավառի լավագույնների հետ և արդյունքում բարձրացնել մասնագիտական մակարդակը: Այդ գործոնների պատճառով միջազգային համագործակցությունը դառնում է ավելի կարևոր, քան երբևէ: Ըստ էության, պետք է հիմնականում խթանել այն միջազգային ծրագրերը, որոնք նպաստելու են այնպիսի ուժեղ գիտական բազայի զարգացմանը կամ ստեղծմանը, որն ընդունակ է ծրագրի ավարտից հետո երկար ժամանակ բավարարել հասարակության և տնտեսության պահանջները:

**-Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը հերթական հռչակագրային փաստաթուղթը չի՞ դառնա:**

-Այն հռչակագրային է, և այդպես էլ պետք է լինի: Ցանկացած ռազմավարություն հռչակում է հիմնական նպատակներն ու ընդհանուր ձևով նկարագրում այդ նպատակներին հասնելու եղանակները: Ինչ վերաբերում է մարտավարական խնդիրներին՝ ռազմավարության նպատակների ձեռքբերմանն ուղղված քայլերին, ապա դրանք, առհասարակ, շարադրվում են առանձին ծրագրի տեսքով: Այս դեպքում նախատեսվում է մշակել գիտության զարգացման ռազմավարական երկու հնգամյա ծրագիր, որտեղ հստակ նշվելու են ռազմավարական նպատակներին հասնելու կոնկրետ քայլերը, ֆինանսավորման աղբյուրները և պետական պատասխանատու մարմինները:

**Հարցազրույցը՝ Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**